ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	**Անհրաժեշտությունը**
	«Գնումների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես օրենքի իմաստով պատվիրատու հանդիսացող հանրային կազմակերպությունների շրջանակի ընդլայնմամբ, այնպես էլ վերջիններիս կողմից կատարվող գնումների նկատմամբ առավել հրապարակային և թափանցիկ պայմաններ սահմանելու անհրաժեշտությամբ, այդ թվում՝ վերջիններիս կողմից կատարվող գնումների նկատմամբ ևս պարտադիր դարձնելով հանրային հսկողության մեխանիզմի կիրառումը:
2.	**Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**
	Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված ցանկում ներառված կազմակերպություններն իրենց ազդեցության տակ գտնվող ընկերություններից ձեռք են բերում ապրանքներ աշխատանքներ կամ ծառայություններ: Նման դեպքերում առաջանում է շահերի բախում, խաթարվում է մրցակցությունը: Առաջարկվում է սահմանել, որ եթե կատարվում են նման գնումներ, ապա հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունները պետք է հայտարարեն նման դեպքերի մասին, իսկ ազդեցության տակ գտնվող ընկերությունը, որը տվյալ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման համար կատարում է գնումներ, գործընթացները կազմակերպվի կանոնակարգված մեխանիզմով՝ ապահովել թափանցիկություն և հաշվետվողականություն: Նախագծով նախատեսվում է. - սահմանել, որ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) կողմից հաստատված ցանկում ներառված հանրային կազմակերպությունները գնումներ կարող են կատարել իրենց ազդեցության տակ գտնվող ընկերություններից, պայմանով, որ վերջիններս ևս իրենց կարիքների համար կատարվող գնումները կկատարեն ‘‘Գնումների մասին’’ օրենքով սահմանված կարգավորումներով.

	- սահմանել, որ՝ • նման ընկերությունների ցանկը կհաստատի ՀԾԿՀ-ն՝ հանրային ծառայություններ մատուցող կազմակերպության դիմումի հիման վրա. • ընկերությունները կունենա իրենց գնումների կատարման կարգերը, որոնք չպետք է հակասեն նշված օրենքով սահմանված նպատակներին և սկբունքներին: Ընդ որում ՀԾԿՀ-ն կհաստատի ընկերությունների գնումների կատարման կարգերին ներկայացվող հիմնական պայմանները՝ դրանք նախապես համաձայնեցնելով ՖՆ-ի հետ և կիրականացնի մոնիտորինգ այդ պայմանների կատարման նկատմամբ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով պետական կառավարման կամ ինքնավար պետական մարմինների հետ. • ընկերությունների կողմից կազմակերպվող գնման գործընթացների հետ կապված բողոքները կքննվեն մյուս պատվիրատուի համար սահմանված ռեժիմներին համապատասխան. • ընկերությունները պարտադիր պետք է հետևեն ՖՆ-ի կողմից վարվող մասնակիցների ՞սև ցուցակի՞ պահանջներին. - հանրային կազմակերպությունների և վերջիններիս ազդեցության տակ գտնվող ընկերությունների կողմից կնքված պայմանագրերի կատարման նկատմամբ պարտադիր դարձնել հանրային հսկողության մեխանիզմների կիրառումը:
3.	**Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**
	Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականության փոփոխություն չի նախատեսվում:
4.	**Կարգավորման նպատակը և բնույթը**
	Նախագծով առաջարկվում է բարձրացնել հանրային կազմակերպությունների կողմից կատարվող գնումների թափանցիկության և հրապարակայնության մակարդակը:
5.	**Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք**
	Նախագիծը մշակվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:
6.	**Ակնկալվող արդյունքը**

	Նախագծի ընդունման արդյունքում կբարձրանա հանրային կազմակերպությունների կողմից կատարվող գնումների թափանցիկության և հրապարակայնության մակարդակը:
7.	**Տեղեկատվություն նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության կամ բացակայության մասին**
	Նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:
8.	**Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ:**
	ՀՀ վարչապետի 25.08.2022թ. թիվ 977-Լ որոշմամբ հաստատված գնումների համակարգի զարգացման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրի 3.3 կետ: Միջոցառման անվանումը՝ «Համակարգային վերլուծությունների աջակցություն և իրականացում», Ակնկալվող արդյունքը՝ մրցութային, պլանավորման և պայմանագրերի կառավարման գործընթացների շարունակական ուսումնասիրությունների իրականացման արդյունքում՝ ռիսկերի բացահայտում և կառավարում, արդյունավետության բարձրացում: